

ՅԺՍՆԱՄԵԱՅ ՅՈՒՆԷԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ

ԼԵՒՈՆԻ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴԻ

ՔԱՅԱՆԱՅԱՊԵՏԻՆ ԳՌՈՄԱՅ



Մեր ժամանակները շատ սովորական են Յորելեանք՝ մասնաւոր իշխանաց եւ մեծամեծաց պատուոյն համար: Բայց Սրբազան Քաջանայապետիս ի պատիւ կատարուածն այնչափ շքեղ ու մեծապայծառ է, մինչեւ կրնայ գրուցուիլ թէ ոչ երբեք տեղի ունեցած է Յորելեան այսչափ ընդանուր հանդիսիւք եւ ցուցակութեամբք՝ քայց եթէ մի անգամ միայն հինգ տարի առաջ, եւ այն առթիւ Յիսնամեայ Յորելինի Քաջանայութեան ուղն Քաջանայապետիս: — —

Փետրուար ամսոյն կէսէն՝ ըլլոր աշխարհս ամենամեծ տօնախմբութեան եւ ցնծալից ուրախութեան կերպարանք առած է: Երկրագնդիս մի բեւեռէն մինչեւ միւսն, Կաթողիկէականք ամէն կողմ՝ իրր թէ իրարու հետ միցելով՝ եկեղեցական եւ արտաքին շքեղ հանդէսներով կը ծգնին իրենց խնդակցութիւնն աշխարհատես յայտնութեամբ երեւան հանել: Եւ ոչ այսչափ միայն այլ նաեւ ամէն տգէ եւ կրօնէ թէ՛ քարձրատիծան անձինք եւ թէ՛ ռասարակ մարդիկ՝ ըստ իւրաքանչիւր կարողութեան կը մասնակցին այս ընդանուր յայտարարութեան: Հօգր Ինքնակալք, Իշխանք եւ Իշխանուհիք, մեծամեծ հաւարակապետութիւնք՝ քազմախումբ ժողովուրդք կը ջանան ցոյց տալ իրենց խորին մեծարանաց եւ ջերմ համակրանաց՝ դեսպանութեամբք, պատգամաւորութեամբք, յարգական ուղերձիք, ծանրազին ընծայիք: Հանրական մասնակցութեանս ակնյայտին նշան են մասնաւոր այն անթիւ անհամար հեռագիրք, զոր՝ քաց ի Կաթողիկէական Վեհապետաց եւ Իշխանաց, նաեւ օտարք կ'ուղղն առ Յորելինաւոր ծայրագոյն Քաջանայապետս: Վերջնոցս մէջ շատ նշանաւոր են հեռագիրք Ինքնակալ Կայսեր ամենայն Ռուսաց, Անգղիոյ Թագունոյն, Ռուսիոյ կայսերական անլն Սերգիոս Մեծ-Դքսին, Յունաց Թագաւորին, եւ քաց յայլոց՝ նաեւ Մոնղոնեկրոյի Իշխանին:

Տարակոյս չկայ որ Կաթողիկէական իշխանաց եւ ժողովրդոց անզուգական միարամութիւնը քսական հետեւութիւն է յարգանաց եւ սիրոյն զոր ի նարկէ ունենալու են Կաթողիկէ եկեղեցւոյ Վեհալոյն Գլխոյն: — Իսկ Կաթողիկէական շեղողներուն այս յարգական եւ սիրային յարտարարութեանց մասնակցութիւնն չէ այնչափ Սրբազան Քանանայապետիս յեկեղեցւոյ Քրիստոսի բռնած քարծր աստիճանն որչափ իւր անձնական շքնադ ու զարմանալի ձիւրքերն, որոց այնպիսի պայծառ ցոյցեր տուած է իւր Գանակալութեան սկիզբներն իսկ. եւ որոց պատմաստա աշխարհ ամիսայն զկնքն հիացմամբ կը դիտէ:

Այս ինացումս — Մեծ Քանանայապետիս իւր լուսաւոր մոտքն, խորին զիտնականութեամբն, անյամմնատ խաղաղասիրութեամբն, իմաստուն եւ խոնմական վարմամբն, ամէն կրօնական-քարոյական-քաղաքական նշանաւոր դիպաց մէջ իւր հաստատուն րայց միանգամայն քաղցր ու զիջողական միջամտութեամբն, ազգաց եւ ժողովրդոց եւ մանաւանդ Աղբատաց եւ Գործաւորաց դասուն նոյն իսկ ժամանակաւոր քարօրութեան նկատմամբ անդու եւ հաշտարար ջանիւքն, ինքնազիր իմաստուն շրջաքերականօքն — այնչափ ընդարձակած է, մինչեւ նոյն իսկ ոչ այնչափ կրօնասէր լրագիրք մեծամեծ գովեստիւք կը խօսին իւր վրայ: Կը գրուցեն՝ թէ Լեւոն ԺԳ. Պետրոսի Գահուն վրայ նստող ամէնէն նշանաւորագոյն եւ ամէնէն պատկառելի Հայրապետաց մին է... որ Գիտցաւ քաջութեամբ պաշտպանել Ս.Գահուն իրաւունքներն առանց ընդհարկանելու իրերն այլազգ տեսնող տէրութեանց նեւ... թէ Հնարք գտաւ ծոելու եւ զիջանելու ինք չկտորելով... թէ Բովանդակ քաղաքականացեալ ազգաց համարումս ու վստահութիւնը լիով եւ արժանապէս կը վայելէ... եւ թէ Մարդկութեան ամէն քարեկամք կը ցանկան զինք տակաւին շատ տարիներ իւր քարծր աստիճանին մէջ տեսնել:

Յանկալի էր մեզի Մեծաշնչակ Քանանայապետիս յիշեալ շքնազգիւտ ձրից եւ քարեմանութեանց նկարագիրն, եւ իւր պատուոյն համար կատարուած հանդէսներուն գոնեայ զլիաւորներն նադորդել միւր քնիթերցողաց: Բայց որովհետեւ ոչ դժուարին միայն այլ նաեւ գրեթէ անկարելի է թերթիս անձուկ էջերուն մէջ համառօտիւ իսկ նշանակել, կը շատանանք զայն միայն յառաջ քերելով որ կատարուած է ի հոռմ, եւ մանաւանդ յունկնդրութեան ազգային կղերին, որ եւ իսմընէն ազգիս համար ալ ուրախական է եւ պատուարեր:

